

Հայութիւն

Արմենիա

Հայութիւն պատմական գործարք

Հայութիւն

Հայութիւն պատմական

Հայութիւն պատմական

Հայութիւն պատմական

Հայութիւն պատմական

ԱՅՃԻՍՏԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՔՈՒՐԴԻՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՐ

—

Պոնտոսի, թուրքական Հայաստանի և Քուրդիստանի բնակիչները, որոնք հաշվում են մօտ երկու միլիոն հոգի՝), մեծ մասամբ պատկանում են նոյն ցեղերին, ինչ ցեղերի որ պատկանում են Անդրկովկասի բնակիչները: Թէ ցեղաբանական և թէ աշխարհագրական տեսակէակց այս երկու սահմանակից երկիրները մի միութիւն են կազմում: Երկու երկրումն էլ բնակւում են վրացիներ, թէև տարբեր անուանակոչութեամբ: Թուրք կրդումը հայկական է, ինչպէս որ է ոռւս կրեանը: Քուրդ հովիւները արածացնում են իրենց հօտերը ինչպէս Անանի նոյնպէս և վան լճի եղերքներում: Քաղաքական սահմանը ազգերի համար բնական սահման չէ: Այս էլ թէև ճիշտ է որ հակադարձ գաղթականութիւններ տեղի ունեցան մի երկրից գէպի միւսը, ոչ բոլորովին ինքնաբերաբար, Առուսիայի ամեն մի նոր յաղթութեան ժամանակ:
Այսպէս՝ 1828-1830-ին հարիւր հաղարից աւելի հայ, յուսալով քրիստոնեաց երկրում աղատութիւն գոնել, Թուրքիայից և Պարսկաստանից գաղթեցին, աղատատան ինդրելով ոռւս կառավարութիւնից և սուայան թուրք ու քուրդ գաղթողների թողած երկիրները: Խակ այս վերջիններն քաշւում էին մահմետական երկիրներ: Նմանապէս էլ 1877-ին՝ ժողովրդի փախանակութիւն տեղի ունեցաւ թուրքական Հայաստանի և ոռւսական Անդրկովկասին միացրած

2) Տրապիզոնի, Երզրումի և Վանի վիլայէտների (Նահանգների) բնակիչների մօտաւորական թիւը, ըստ Երիցովի, Մորդումանի և լ.

Թուրք և թուրքմէն 800000

Լազ

100000

Հայ

2էրքէզ

50000

Քուրդ

Թուրք

50000

Այլ և այլք — 20000

նահանգների միջև։ Արտահանի և կարսի թուրքերը իրենց նահանջող բանակներին հետեւեցան դէպի էրզրում և Սըւազ։ Արգուինի թուրքերը գնացին դէպի Վանի բարձրատանգակը, մինչդեռ վերին Ճորսխից, Էրզրումից և Վանից Հայերը Եկան բռնելու ռուսական ամրոցների շուրջը բաց մնացած տեղերը։ Յսմանեան կոցսերութիւնը, ընդհանուր տումոմբ, աւելի օգտուեց այս փոխանակութիւնից¹⁾, որովհետեւ մուտուլմանները չեն կամենում այլ եւս ապրել ռուս տիրապետութեան տակ և գնում են միանալու իրենց եղբարիներին, մինչդեռ թուրքիայի հայերից շատերը աւելի քիչ են վախենում վաշաների բարբարոսութիւնից, քան Մոսկովեան վարչութեան բժախնդրութիւնից(6)։ Ոտոսական արշաւանքների գլուխոր հետեւանդն եղու այն, որ Հայաստանը Թուրքաստան դարձաւ²⁾։

Այսուամենայնիւ՝ այս աշտգին փոփխութիւնները ցեղաբանական տարրերի հաւատագրակշռութեան մէջ,—փոփխութիւններ, որոնց ընթացակից էր տարսափելի մոհացութիւնը՝ պատճառութած սովոր, ջերմախորից, հայրենիքի կարօտից,—ամենեն չկարողացան ճշտել և յարմարացնել ցեղաբանական տահմանները պայմանական քաղաքական տահմանագծի հետ։ Հատկանալի է թէ նոյնացեղ ժողովուրդների տահմանակյութիւնը ինչ մեծ առաւելութիւն է տալիս ռուս կառավարութեանը, եթէ սա Դրան հետ ընդհարումն ունենայ։ Յանուն իւր հոգածակների՝ անողրկովիլատեան Շրացիների, կարող է նու միջամտել Տրաքիզոնի Շրացիների գործերին։ Խրուքուրդ հոլիւների իշխաղի՝ դիւրին է նրան պահանջել այդ թա-

1) Գաղթական շարժումը Ռուսիայի միացրած երկիրներում, 1878-ից մինչև 1881։

Եկառների թիւը 21890

Գաղթողների » 87760

Կորուստ 65870

փառականների վրայ հսկելու իրաւունքը՝ մի երկրից միւսն անցնելիս: Բայց մանաւանդ իբրև Հայերին պաշտպան, իբրև սուրբ Էջմիածնին տիրող բոլորովին իւր քաղաքական գերում կլինի նա՝ պահանջելով վարչական ինքնավարութիւն և բարենորոգումներ իւր համարական եղբայրների համար: Եւրոպական թուրքիայում կարողացաւ նա բարձրացնել իւր հզօր ձայնը ի նպաստ բուլգարներին և նրանց տալ տուեց մի երկիր, որ տարածւում է մինչև Ալոնիքի ծոցը: Այնպէս էլ, երբ յարմար առիթը գայ նա ղինուած կլինի միջամտելու յօգուտ հայ հասարակութեանց որ տիրուած են էրզրումի հովտից մինչև Ալեքսանդրէտ Խորշի ծովահայեաց ափերը, ճիշտ գէմ առ գէմ Անգլիայի նոր տիրած Կիպրոսին: Խոկ ինչ վերաբերում է Մեծ-Բրիտանիային, նա անկարող կլինի անխախտ պահպանել թուրք պետութեան այժմեան սահմանները ընդդէմ ուուսների: Եթէ ստիպում է նա թուրք կառավարութեանը կարգ ու կանոն պահել իւր անատոլեան հահանգներում, այդ մի պատրուակ ունենալու նպատակով է, որ յետ առնէ իւր պաշտպանութեան անխոհեմ խոստումը: Ապառնում է, որովհետեւ չէ կարող գործել:

Տիուր է մոտածել, որ մի այսչափ հարուստ երկիր, բարեխառն գօտու ամենագեղեցիկ և ամենաբերրի երկիրներից մէկը, որ իւր տարածութեան համեմատութեամբ ամենաշատ թիւն է տուել հացարոյսերի, այսօր շատ սակաւ է մշակուած: Հազիւ Յ բնակիչ կարելի է հաշուել մի քառակուսի քիլոմետրի վրայ և այն էլ շատ հաւանական է, որ պակասում է օրից օր: Աակայն տիրող ազգը՝ թուրքերը կամ՝ աւելի ճիշտ՝ թուրքմանները, — որովհետեւ գեռ մինչև այսօր էլ նրանք բաժանուած են առանձին առանձին ցեղերին — ունին մեծ բարեմասնութիւններ որով հաւանական է թէ ապագայում կարող են մեծ մասն ունենալ ազգերի ընդհանուր գործնեութեան մէջ: Աշխատասէր, համբերող, սկսուած գործում տոկուն, թուրքմանները նորից նոր սկսում են, առանց ձանձրանուլու, ոտարների արշաւանքներով ընդհատուած գործը: Խրենց նախնեաց՝ կարա-կոյունլի և Աղ կոյունլի, այն է՝ «Ու ու Ապիտակ Հովիւների» փառքին գիտակից՝ թուրքմէնները պահպանել են աղ-

գային միութեան զգացումը, որ պակասում է իրենց հարեանների մեծ մասին և ցեղերի խառնուրդի ժամանակ գլխաւորապէս սրանց օգտին է կառարւելմ այդ ձուլումը։ Շատ գաւառներում լազերը, չերքէզները, քուրդերը վերջի վերջոյ ձուլում են սրանց հետ, մասնաւորապէս այն տեղերում, ուր թափառաշրջիկ սովորութիւնները տեղի են տուել երկրագործական կեանքին։ Այս թուրքմանների ուժեղ ժողովրդի մէջն է որոնելու Թուրքիան իւր «վերածննդեան» տարրերը և ոչ թէ դաշնակցութեանց, սկսերազմական անհաստատ բաղդի և կամ «Եւրոպական դրամագլուխների» օժանդակութեան մէջ⁴⁾):

Բամթումի և Տրաբիզոնի միջև՝ ծովափի լազերը և եղերական լեռների աճարները մահմետական վրացիներ են, ոչ պակաս վայելուչ, շնորհադի և գեղեցիկ քան իրենց Վրաստանի եղբայրները։ Նրանց բարբառը, որ շատ մերձաւոր է Մինքըլիայում խօսուած գաւառաբարբառին, խառն է թուրք և յոյն բառերով²⁾: Կրօնի, քաղաքական—վարչական ձեփ տարքերութիւնը, մանաւանդ ժամանակաւոր պանդխուռութեան սովորութիւնը, որ ընդհանուր է Լազիստանում, աստիճանաբար աւելի մեծ տարքերութիւն են առաջացնում թուրքահպատակ լազերի և ռուսահպատակ վրացիների խօսակցական լեզուի մէջ։ Մի քանի գաւառներում, մինչև անգամ վերին և միջին ձորոխի վրայ, թուրքերէնն է դարձել սովորական խօսակցութեան լեզու։ Լազերը ճարտար են արհեստների և ամեն տեսակ ձեռնարկութեանց մէջ, այլ և արկածախնդիր են։ Կար ժամանակ որ նրանք մեծ հաճոյքով պարապում էին ծովաչինութեամբ և նրանց վտքրիկ մակոյկները՝ առանց ուշ դնելու միրիկների վտանգին, ընկնում էին վաճառականական նաւերի յետնից, իսկ այժմն զբաղւում են ձեռնորսութեամբ և ապրանքներ կրելով։ Հազարաւոր պանդխուսներ դիմում են կոստանդնուպոլիս բեռնակրութեամբ, նաւաբարձութեամբ և կաթսայագործութեամբ պարապելու⁵⁾։ Տանը մնացոլները հայիւներ են կամ

1) Palgrave, արգէն յիշուած։

2) Rosen, Ueber die sprache der Losen.

3) Извѣстія Кавказскаго Отдѣла, томе V. 1877—1878.

երկրագործ, և մարդ հիանում է այն հոգածոթեան վրայ, որով նրանք հաստատում են իրենց մշակութեան լանջերը (տեռաս) լեռների կողերի վրայ: Յուն Լազիստանի գաւառում, որի արևմտեան սահմանն է Քէմէր հրուանդանը (Քէմէր բուռնու), բնակիչները գրեթէ ամբողջապէս լազեր են: Դրանից այն կողմը՝ դէպի Տրաբիզոն և աւելի հեռու մինչեւ Պլատանայ, հետզետէ պակասայթիւ են գառնում նրանց հասարակութիւնները և խառն բնակուած թուրքերի և յոյների հետ: Լազերից յետոյ այս երկրում ցեղական ամենանշանաւոր տարրը կազմում են չերքէզները, աբխազները և կովկասից ուրիշ զանազան գաղթականներ: Որոնց տարեկան եկաւորութիւնը հասնում է մօտ մեց հազարի: Որանք յօժարութեամբ ձուլում են բնիկների հետ ի մի ազգութիւն, տեղացի աղջիկների գեղեցկութեան շնորհիւ, որոնց նորեկները մեծ յօժարութեամբ իրենց կին են խնդրում¹⁾): Հայերը ունին միայն գիւղերի մի փոքրիկ խումբ կոսի՛ի շուրջը, բաթում գաւառի սահմանագծի վրայ, իսկ յունական գաղութը բազկացած է միմիայն ծովեղերեայ քաղաքներում և գիւղաքաղաքներում առանձնացած մի քանի ընտանիքներից: Ներքին մի քանի հովիտներում, մասնաւորապէս Ծնկուզուտում (Զեկոլիք), Տրաբիզոնից Գիւմիշ-Խանէ տանող ճանապարհի վրայ, գտնուում են Աջն բնակիչներ (կէսկէսներ)—«Մէցցօ-մէցցօններ», որ մարդ չգիտէ մուսուլման թուրքերի²⁾ հետ գասել թէ քրիստոնեայ յոյների հետ: Առաւօտեան խօսում են նրանք թուրքերէն և գնում են մղկիթ, երեկոյեան խօսում են յունարէն և կատարում են քրիստոնէական խորհուրդները: Ծագած յօյներից, բայց Լազերի հետ խառնուած յօյներից, և տասնեօթներորդ գարում ընդունած իսլամը, այս երկեղու և երկիրօն գիւղացիները ծածկում են օսմանցիներից իրենց քրիստոնէական ծէսերը, թէև այդ գողոնիքը յայտնի է ամենքին և արհամարհանքով թոյլատրուած: Այս էլ կայ, որ նրանց մահմետականութիւնը զուտ կեղծաւորութիւն չէ: Երկու կրօնքի

1) Palgrave, Ճշուած:

2) Hamilton, Researches in Asia Minor;—Eli Smith;—Flandin;—Palgrave, etc.

արարողութիւններն էլ սովորութեամբ անհրաժեշտ են դարձած նրանց համար հաւասարապէս(7): Թերեւս սրանց մէջ պէտք է տեսնել այն Մակրոնների սերունդը, որոնց մասին խօսում է Հերոդոտը, իբրև թլիառութիւն գործածողների վրայ. այդ գէպքում սրանք «մուսուլման» եղած կլինին յառաջ քան խլամի զինուորների այս երկիրների տիրելը⁴⁾:

Ոչ մի տեղ, ոչ Թուրքիայում և ոչ էլ Անդրկովկասում, Հայկեանները կամ Հայերը չեն ապրում՝ իբրև մի միաձոյլ ազգային մարմին, սակայն ձորոխի հովտի հարաւային զառիվայրերում նմանապէս և վերին Եփրատի գլխաւոր ճիւղերի վրայ նրանք են տիրող ժողովուրդը: Փոքր Ասիսյում՝ Զիհունի աւազանում բնակուած են նրանք բայցառապէս մի քանի վերին հովիտներում: Այսպիսով՝ Աւծովից ձգուած մինչև Միջերկրականը՝ ամենալաւ կերպով այս տեղերումն են պահպանել Հայաստանի թագաւորութեան աւանդութիւնները: Հայերի թիւը յայտնի չէ: Նրանց քաղաքական գրութիւնը գառնալալ առիթ սաստիկ վիճաբանութիւնների, երկու կողմից էլ չափազանցութիւններ են տեղի ունեցել, նայելով պայքարի շահերին: Մի կողմին նայած՝ Թուրքիային մնացած նահանգների հայերի թիւը լինելու է երկուսից երեք միլիոն, միւսների առելով՝ միմիայն հինգ հարիւր հազար: Պաշտօնական վիճակագրութիւնները, որ կազմուած են իւրաքանչիւր տեղի բնակիչների թուի մօսաւորական ենթագրութեամբ, մշտապէս չեն պահում իւրաքանչիւր աղգութեան կանոնաւոր հաշիւր, ոսկայն ճանապարհորդների հետազօտութիւններով զանազան ցեղերի յարաքերական չափը յայտնի է մօսաւորապէս, ուստի և կարելի է թուրքական հայերի մօսաւոր թիւը հանել, որ հաւանականաբար լինելու է եօթից ութիւնը հարիւր հազար, այն է՝ ամբողջ Հայ աղգութեան մի երրորդը բնակուելիս պէտք է լինի 0ումանեան հոյի վրայ(8): Երդումում՝ ինչպէս և կոստանդնուպոլսում՝ Հայերը տարբերուում են թուրքերից տեղի բաց և ազատամիտ ոգով, ուստի աւելի մեծ ոէր ունին, վաճառականութեան և արուեստների մէջ աւելի մէջ

1) De Gobineau, Trois ans en Asie.

ձեռներիցութիւն։ Վանի վիլայէտում չկայ տուն, որ նրանց ձեռքով շինուած լինի, չկայ տեղական կոոր որ նրանց գործածը լինի, ժիայ պտուղ, որ նրանց պարտէզներից լինի։ Նրանք դիմում են պանդխտութեան մեծ յօժարութեամբ։ Զհաշուելով փաշաների բռնութիւններից և աւազակ քուրդերի ասպառակութիւններից փախածները, հազարաւորներ կան նրանցից Ատամբոլում, Անասովիայի և Եւրոպական Թուրքիայի միւս քաղաքներում։ Այս տեղերում բանում են նրանք իրեւ որմնագիր, մշակ, բեռնակիր։ Կոստանդնուպոլսում Վան-Էրմէնիսի, «Վանեցի Հայ» անունը գործէ ածւում ինչպէս «Օլիբրնա» բառը ֆրանսիայի մեծ քաղաքներում։ Ամբողջ գիւղեր բնակուած են միմիայն կանանցով, որոնց այլերն ու եղբայրները պանդխտութեան մէջ են, իսկ իրենք մնացել են ընտանիքի տուն ու տեղին հսկելու։

Մինչդեռ Հայ ժողովրդի ծանրութեան կեղրոնը գտնուում է ուստի հողի վրայ՝ Արարատ սարի ստորատում, քուրդերինը⁴⁾ ընդհակառակը թուրք հողի վրայ է, ուր և գտնուում են նրանց ամենաքաղմանարդ ցեղերը։ Նրանց բնակութեան բուն կեղրոնը գտնուում է Վանի բարձրաւանդակութեան վրայ, թէև նրանց թափառած արօտատեղիները անսահման են։ Հաշուելով քուրդերի թւում նրանի եղերական լեռնագոտիների Լուռիներին և Բախտիարներին նաև այն զանազան ցեղերին, որոնց պարսիկ թագաւորները տեղափոխել են Խորասանի և Բաղուջիստանի սահմանների վրայ, այն ժամանակ շատ քիչ ազգ կլինի Առաջաւոր Ասիայում, որ այդչափ ընդարձակ երկիրներում սփոռուած լինի։ Քրդերի տիրած գոտին, որ գրեթէ անընդհատաբար տարածւում է Համազանի մօտերից մինչև Այնթար՝ 1000 քիլոմետր երկարութիւն ունի, 250 քիլոմետր միջին լայնութեամբ։ Նրանք բաժանուած են երեք պետութեան մէջ, բայց Ուռուաստանում եղածները համեմատաբար շատ սակաւածիւ են և շրջապատուած են Հայերով, վրա-

4) Թրքական հողում սրանց ցեղական անունը հնչուում է քիւրդ կամ քիւրտ։ Երաբները այս ազգն անուանում են քարտ, յոդնակի՝ էքրատ, իսկ իրենք իրենց կոչում են՝ քարտմանէւ։

ցիներով ու թաթարներով ու ոչինչ յարակցութիւն չունին իրենց գլխաւոր ցեղերի հետ: Քուրդ ցեղերի մեծամասնութիւնը ճանաչում է Գրան գերիշխանութիւնը, արևելեանները կախումն ունին Պարսկաստանից, իսկ զանազան դժուարակոխ գաւառների ցեղեր, մասնաւորապէս Դէրախմ սարերինը, որ էրզրումի հարաւ—արևմտքումն է, ապրում են փոքրիկ անկախ տէրութիւններով⁴⁾: Այն հովիտներում ուր քուրդ ցեղերը ապրում են խիտ առ խիտ, մասնաւորապէս մեծ ջար գետի աւազանում, նրանք կազմում են մի բաւական հզօր ազգայնութիւն, այնպէս որ թուրքերի և պարսիկների գիմաց մի անկախ պետութիւն կազմելու փառասիրութիւնը կարող են ունենալ: Այս գարի կիսից ոկած, մասնաւորապէս վերջին ուռւս արշաւանքից յետոյ տեղի ունեցած ապաստամբութիւններից շատերը անշուշտ իբրև նպատակ ունեին ձեռք բերել քաղաքական անկախութիւն: Մինչեւ անգամ փորձեր եղան հիմնելու մի «քրդական գաշնակցութիւն»: Հազիւ է պատահում որ զանազան քուրդ ցեղերի մէջ անհամաձայնութիւններ ծագին, նրանք ընդհանրապէս յարձակւում են այլասեռ ցեղերի վրայ:

Քուրդերը ցրուած լինելով սյոսպիսի մի մեծ տարածութեան վրայ՝ չունին բնաւ միւնոյն ջիզիքական տիպը և անկասկած տարբեր ծագումից են: Ամանք խառնուրդ են թուրքմէնների կամ թուրքաթաթարների, ուրիշները խառնուած են հայերի կամ պարսիկների հետ: Մի քանի ցեղեր, որոնք համարւում են մաքուր հայկական ծագումից, նկատուած են իբրև սերուած նախկին ցրիստոնեայ հասարակութիւններից, որոնք ընդունել են Խալամը: Քրդական սարերում զօրանիստ ունեցող գրեթէ բոլոր թուրք զինուորները ամուսնահում են տեղական աղջիկների հետ²⁾: Դէմքի տարբերութիւնը

(1) Քուրդ ժողովուրդները մօտաւորապէս հաշուած: Թուրքական Քուրդիստան և Թուրքական Ասիայի ուրիշ երկիրները. 1300000 բնակիչ.

Պարսկաստան (Լուսինները և Բախտիարները չհաշուած). 500000

Աղուանիստան և Բալուջիստան 5000 (?)

Թուսական Անդրկովկաս 130000

2) Millingen, Wild Life among the Koords.

Համապատասխանում է ծագման տարբերութեան. քրդերը տգեղ
են և անձոռնի, բայց կան և այնպիսի քրդեր, որոնք կարող են մրցել
ամենագեղեցիկ չերքեզների հետ ուժեղութեան և շնորհը մրցա-
նակը տանելու համար: Վան և Ուրմիա լճերի աւազաններում ապ-
րու քրդերը, որ համարում են Պերսեպոլսի արձանագրութեանց
մէջ յիշուած Քուղրահաների սերունդ, կամ սերուած կարգուքնե-
րից և գորդիացիներից, որոնց մասին խօսում են հին յոյն հեղի-
նակները, միջահասակ են և թիկնաւէտ, խոշոր և հպարտ գծագրու-
թեամբ: Խսկ պարսկական սահմանի քրդերը ունին ընդհանրապէս
գէպի յետ վախած ճակատ, լայն և որոշակի բաժանուած կոսկեր,
երկայն արտեանունք, մեծ բերան, գուրս ցցուած կզակ, սաստիկ
արծուըռունք քիթ, որ սրածայր է և մսոս պինչերով¹⁾): Շատ
քուրդ ցեղեր պարսիկների նման ու կամ կարմիր են ներկում
իրենց թանձր մօրուքը և մազերը: Յաճախ կարելի է հանդիպել և
այնպիսիներին, որոնք բնականից ունին շէկ մազեր և կապոյտ աչ-
քեր, կարծես գերմանացիներ լինին²⁾: Մ. Դիւհուսէի չափած հինգ
քրդական գանգերը նշանաւոր կերպով կարճագլուխ (բուախի-
սէֆալ) էին³⁾, և աչքի ընկնելու չափ տարբերում էին արևելեան
պարսիկների, աղուանների և հնդիկների գանգերից: Ատկայն քրդ-
երի մեծ զանազանութիւնը միմեանցից զիզիքական տեսակէտից
թոյլ չէ տալիս այս մի քանի չափածութեան մէջ մի ընդհանուր
իրողութիւն տեսնել: Ամերիկական քարոզիչները, որ շատ բազմա-
թիւ են քրդական երկրներում, այդուղերի բնակիչներին նմանե-
ցնում են կարմրամորթերին: Քրդական գէմքի ընդհանուր գծա-
գրութիւնը, ասում է Դիւհուսէն, յիշեցնում է «գիշակեր գա-
զանը», բայց զուրկ չէ գեղեցկութիւնից: Անուկները սիրուն են,
և թափառականների նկարչական կարաւաններում ոչ մի պատկեր

1) Duhousset, Etude sur les populations de la Perse, Revue orientale et Américaine, 1863.

2) Polak, Persien, Das Land und seine Bewohner.

3) Քրդերի գանգային նշանաչափը՝ 0,86, Միջին նշանաչափը ըստ Էռ-
նէստ Շանտրի՝ 0,81:

չեւ այնցափ շնորհալիս որչափ թամբերի ետեք, ձիերի գտւակների վրայ ամրացրած թեռերի (Խուրջինների) միջից դուրս ցցուող վազրիկ ժպոսղ զԼիփիկները¹⁾): Կանայք երբէք չեն քօզարկում իրենց երեսը, ունին լնդհանրապէս խիստ կանոնաւոր գծագրութիւն, մեծ ազքեր, արծուային քիթ, խոշոր կազմուածք, երկայն հիւսած մազեր, որի մուք ուե գոյնը գաշնաւորւում է կաշու թեթևակի մրային գունաւորութեան հետ: Բայց ցաւալին այն է, որ շատ ցեղերում կանայք իրենց ագեղայնում են, ինչպէս հնդկուհները՝ անցկացնելով ուունգներից սակի օղ (Խզմայ) (9): Այս մարդկանց պէս քաջ և հարկ եղած ժամանակ զէնք գործածող՝ սիրում են նրանք զարդարանքներ և գեղեցիկ զգեստներ, բայց հաղիւ է պատահում: Որ զբանցով զարդարուին, որովհետեւ այրերը այդ իրենց են վերապահում: Քուրդը սիրում է թանկագին և խայտաճամուկ զգեստներ, վառ փայլուն գոյներ, բարձր գլխարկներ՝ փաթաթուած շքեղ շալերով: Խոր զգեստի ծանրութեանը աւելացնում է նաև իւր գօտու զինարանը՝ ասրճանակներ, գանակներ, եաթագաններ, հրացանն ուսընդանութ անցկացրած, յենուած երկան և ժապաէններով զարդարուն սրածայր նիզակի վրայ: Բայց պատերազմի համար աշխատում է նա թեթև զինուիր: Բաշգաղից է գալիս քրդական սարերը բամբու եղեգնի ցօղունը՝ նիզա՛ների համար և անգեղջիւրի կաշի՝ վահանների համար²⁾.

Ա. Դիւհուսէն իւր ճանապարհորդութեան ժամանակ՝ քրդական բարձրաւանդակն անցնելիս չնկատեց զիզիքական տարբերութիւն քուրդ մեծերի և երկիր մշակող ամբոխի մէջ, բայց հետախոյզ ճանապարհորդները և քարողիչները որոնք երկար ժամանակ առքել են այդ ցեղերի մէջ, միաբան վկայում են, որ քրդական շատ ցեղերում՝ Պարսկաստանում թէ Ասիական Թուրքիայում, կայ երկու բոլորովին որոշ զասակարգ, որ հաւանականորէն պատկանում են երկու տարրեր ցեղաբանական բնի (ծագումի): Այս երկու զասակարգն են՝ +Եղքանչ կամ՝ ասուլիքա (աշիրէթ), այն է՝ աղնուական-

1) James Creagh, Armenians, Koords and Turks.

2) Thielmann, Streifzüge in dem Kaukasus.

ները և գուշանները — գիւղացիները։ Հարաւային գուրդիստանում վերջիններս չորս կամ հինգ անգամ աւելի բազմաթիւ են քան առաջինները և նկատուած են՝ հաւանօրէն մեծ իրաւամբ, իրբե սերունդ մի յաղթուած և սորկացած աղգի¹⁾։ Ասիական թուրքիայում դրանց անուանում են ռայա, ինչպէս և միւս ճորտերին։ Մի քանի գաւառներում նրանք իսկապէս ստրուկներ են՝ պարտական հողը մշակելու իրենց տէրերի համար, որ համարում են կեանքի և մահի իրաւունք ունեցող նրանց վրայ։ Ոչ մի դէպքում այդ ճորտ հողագործը ցէ կարող բարձրանալ մինչև պատերազմիկ գասակարգը, նրան մնում է միայն հպատակել ճակատագրին՝ վոխել իւր տէրը, եթէ կռուի ելքը այգպէս է տնօրինում։ Իրենց կողմից աղնուականները կամ պատերազմիկները անպատութիւն են համարում երկրագործութեամբ պարապել։ Միակ խաղաղական զբաղմունքը, որ ներելի է այս գերակայ մարդկանց՝ տաւարաբուժութիւնն է։ Բացի հովւութիւնից դրանց համար միմիայն արժանաւոր զբաղմունք են՝ աւազակութիւնն ու պատերազմը, կատարած կամ իրենց հաշուին, կամ ուրիշի՝ — իրբե վարձկան։ Մի քանի գաւառներում դրանք որոշում են գուրաններից՝ կարմիր կրկնոց կրելով²⁾։ Արանք գուրանների գասակարգին պատկանող քրդերից տգեղ են, աւելի ծանր ու խոշոր կազմուածքով, դէմքերը ցցուած սուր անկիւններով, փոքրիկ և խոր ընկած աչքերով, մինչգեռ գուրանը ունի աւելի քաղցրաբարոյ, աւելի կանոնաւոր և յունական տիպին մօտեցող դէմք³⁾։ Հայերի և քրդերի մէջ ապրում են նաև մի քանի չինգանէ կամ ցիգան — բոշա բնտանիքներ, որ ամեն բանով նման են Եւրոպայում գտնուածներին. և Թերէ-քամէներ, որոնք համարում են թուրք ծագումից, իրենց խօսած բարբառի պատճառով։ Թերէ-քամէները մօտ հարիւր գիւղ ունին պարսկական սահմանի վրայ.

1) Moritz Wagner, Reise nach Persien und dem Lande der Kurden.

2) Millingen, Wild Life among the Koords.

3) Rich, Narrative of a Residence in Koordistan.

Քրդերի բարբառները ինչպէս և գեմքի գծագրութիւնը շատ զանազան են միմեանցից։ Հեռաւոր ցեղերի լեզուները սաստիկ տարրերում են։ Կիլիկիայի սարերի մի քուրդ հազիւ թէ հասկանայ կոպէտ-դադի քրդին։ Նրանց բոլոր բարբառների կազմութիւնը էապէս իրանական է, արևելեան ցեղերի լեզուն հարուստ է սլարտիկ բառերով, արևմտեան և հիւսիսային ցեղերինը—արար և թուրքաթաթար բառերով և գարձուածքներով։ Մի քանի գաւառներում շատ բազմաթիւ են ասորի բառերը, իսկ Անդրկովկասում քրդերը գործ են ածում նաև ուստերէն ասայուածներ։ Զազա լեզուն, որ խօսւում է Մուշ և Բալու՛ում, շատ նմանութիւններ ունի կովկասի Յսերի բարբառի հետ։ Ըստ Վերխ'ի քրդական լեզուն բաժանում է հինգ բարբառի, որոնցից մինը, քիրմանջին, խօսում են Մուսուլից արևմտաք գտնուած բոլոր ցեղերը¹⁾։

Այս բոլոր բարբառները կոշտ են, հնագույն են կարծես պայթիւններով, բայց աւելի պակաս շող և կոկորդային ձայներ են պարունակում քան թէ հարեւան ազգերի խօսած լեզուների մեծ մասը։ Մի քանի խորն զգացուած ժողովրդական երգեր, որ գոփաանում են լեռները, գետերը, գիւղազներին, առանց երկար—բարակ բանաստեղծական քերթութեան, կազմում են բնիկների միակ գրականութիւնը։ Ամերիկական քարոզիչները աւելացրել են դրա միայ Աստուածաշունչի թարգմանութիւնը և մի քանի կրօնական երկեր(10)։ Քրդերը չունենալով սեփական գրութիւն՝ գործ են ածում արաբական այբուբենը՝ իրենց հարեւան պարսկիների փոփոխած ձեռով, իսկ կրթուած քրդերը սովորաբար թողնում են իրենց լեզուն և ընդունում են քաղաքակիրթ իրանցիների և կամ թուրքերի լեզուն։ Նրանց «քուրդ» անունն անգամ պարսկական ծագումից է և նշանակում է «զօրեղ» կամ «հզօր»։ Այս էլ կայ՝ որ թաթարները այս բառը հանում են գուրդ կամ «գայլ» բառից, այս հեգնական ստուգաբանութեամբ վրէժ առնելով մի ժողովրդից,

1) Forschungen über die Kurden und die Iranischen Nordchaldäer.

որի արիւնոտ յափշտակութիւններից շատ անգամ՝ նեղուել են: Քրդերը յաւակնութեամբ համարում են իրենց արաքական ծագումից և կարելի է կարծել, որ իրապէս՝ նրանց մեջաւորների մի մասը պատկանելիս լինի այդ յաղթող ցեղին:

Աչ Բալուձները, ոչ բէդուինները, ոչ Հապաշները և ոչ էլ Պատագոնները գերազանցում են քուրդ պատերազմանէր ցեղերին իրենց աւազակարոյութեամբ և այդ բնազդման բաւականութիւն տալու արուեստով: Մեծաւորը, որի ամրոցը ինչպէս մի արծուի բռն տիրում է կրօնի բերանին, պահում է աւազակների մի փոհմուկ, որ քրքրում՝ են շրջակայ ճանապարհները և նրան են բերում սացած աւարը: Զինուածձեռքով գողութիւնը համարւում է գերազանց պատուաբեր գործ, իսկ մաքսանենգութիւնը արհամարհուած է, թէև այս լեռնային երկրներում, ուր հանդիպում են երեք պետութեանց սահմանները, դիւրին կլինէր նրա գործադրութիւնը: Այս նենգաշահ տուրեաոր թւում է քրդերին իրենց արժանապատութիւնից ստոր: Այսուամենայնիւ օգուտ են քաղում նրանք այս սահմանագծերի հանդիպումից իրենց արշաւանքները կազմակերպելու համար, երբեմն մի երկրում, երբեմն միւսում, այնպէս որ պատասխանառութիւնն ընկնի իրենց զրայիների վրայ և սահմանը գնեն իրենց և իրենց հալածող զօրքերի միջև: Երբ գործը գալիս է իրենց գէպի հայերն ունեցած ցեղական և կրօնական ատելութեան բաւականութիւն տալուն, այն ժամանակ նրանք ինչպէս ձուկը ջրումն են և մեծ ոգեւորութեամբ պատրաստում են աւազակային ասպատակութիւնների: Այս վտանգաւոր գրացիներից խոյս տալու համար էր, որ շատ հայկական գաւառներ անմարդաբնակ գարձան՝ գաղթելով Անդրկոտլիաս: Բարձրաւանգակների շատ երկրներ, քաղաքներ, հայկական ամբողջ գիւղախմբեր իբրև թէ պաշարուած լինին այս յափշտակիներից ոչ ոք չէ յանդգնում պարտէզների սինուից դուրս գալ: Արսափելի պատիճներ, որ գործ են գրւում այս աւազակներին պատժելու համար, մինչև անգամ խարսյկն ու ցցահանութիւնը, չեն վախեցնում այս ցեղերին և յաճախ մինչև անգամ զայրացնում են նրանց և գրգռում ահռելի վրէժինդրութիւնների(11): Այսուղ

ընկճուած, կրիւն սկսում է մի ուրիշ տեղ, այնովէս որ շատ անգամ թուրք կառավարութիւնը ստիպուած է լինում զինուորական արշաւանքների դիմելու: Ըստ Պոլակի կայ մի քրդական աղանդ, որ խստիւ արգելում է կենդանի մարդկանց վրայից յափշտակելը, բայց թոյլ է տալիս մեռածներին կողովտել ուստի և աղանդաւորներն իրենց թոյլատրուած են համարում նախապէս սպանել այն ամենքին, որոնց ունեցածին ցանկանում են: Խաղաղ ժամանակ քուրդ աւազակները խնայում են մարդկային կեանքը, երբէք չեն սպանում իրենց կողովտածներին և մինչև անգամ ուտեստ և զգեստ են թողնում իրենց աւարած գիւղերի աղքատներին: Ուակայն անգլիական հիւպատոս Աքոտը, որը փորձեց իրեն սպաշտակել, ըրածեծ եղաւ և մերկ ձգուեց Դիաղինի ճանապարհին իւր սարսափահար ծառաների մէջ¹⁾:

Քրդերն արիւն են թափում միմիայն անձնական կամ ժառանգական անողատութեան վրէժը լուծելու համար և այս՝ վրիժառութեան սրբազն պարոքը կատարելու համար պատահել է որ նրանք յարձակուել են միմեանց վրայ և իրար կոտորել են մինչև անգամ մզկիթների մէջ: Մեծաւորները, որոնց կուրօրէն հպատակում են ցեղերը, հացով մարդիկ են, սեղանները միշտ բաց, և սուցածընծաններն ու աւարատութեանց եկամուռը ծախսում են խնձոյքներում: Օտարականնը շատ լաւ է ընդունելում եթէ ներկայանում է իրեւ հիւր:

Քրդերը խմբովին առած՝ և չնայած նրանց սպատերազմական բարքին՝ իրենց շրջապատղ այլացեղ զրացիներից աւելի աղնիւ են և աւելի հաւատարիմ: Նրանք ընդհանրապէս պատում են իրենց կանանց և աւելի մեծ տղատութիւն են տալիս նրանց, քան թէ թուրքերն ու պարսիկները: Բայց անընդհատ աշխատանքը դառնայնում է կանանց կեանքը և ասում են, որ շատ յաճախ մայրերը կամենալով աղջիկներին խնայել և աղատել այնովիսի թշուառ կենցաղից, որպիսին իրենցն է, ոչնչացնում են նրանց՝ ծնուելուն պէս: Սակայն քրդերը երբէք չերբէզների պէս, որոնց այնչափ

1) James Creagh. Արդէն յիշուած.

նմանում են ուրիշ կէտերում, չեն ծախում իրենց աղջիկներին հարեմի կաւառներին։ Զնայած բոլոր բարեմասնութեանց՝ քրդերի էութիւնը վտանգուած է թէ Պարսկաստանի և թէ Թուրքիայի շատ գաւառներում — նրանք պակասում են և տեղ տեղ էլ ձուլում են շրջապատող ժողովուրդների հետ։ Ճորտ գիւղացին, որ բնակչութեան մեծագոյն մասն է կազմում, ոչ մի շահ չունի պահպանելու այն կապը որով կազմուած է ռազմիկ գասակարգի հետ, իսկ այս վերջինս իւր կենցաղավարութեամբ գատապարտուած է սպառուելու, լինելով պատերազմի մէջ ամէն ժամանակ և ամենքի հետ։ Կրօնական ատելութիւնն էլ գոնէ Պարոկաստանում, օժանդակում է սպառման գործին, քանի որ քրդերի երեք քառորդը չերմեռանդ սիւննի են, իսկ իրանցիք՝ իրեւ շիաներ, բարեգործութիւն են համարում հալածել և սպանել հերետիկոսներին։

Այս երկրում որ իրեւ ճանապարհ և անցք է եղել ազգերի համար և ուր այնքան ժողովուրդների մնացորդներ խառնուել են իրար հետ, ամեն տեսակ կրօնքներ թողել են իրենց հետքերը։ Պ. Շանտրին մատնացոյց են եղել մինչև անգամ մի՝ բոլորովին կրօն չունեցող քուրդ ցեղի լրայ Սղերտի սանջակում։ Հայկական և քրդական բարձրաւանդակների ցեղերի մէջ գտնւում են ոչ միայն մահմետականութեան և քրիստոնէութեան բոլոր աղանդները, այլ և հին մազգեղականութեան անգիտակից ժառանգորդներ։ Կղզլ — Բաշերը կամ «կարմիրագլուխները» — բառ որ Աղուանիստանում և Սրեելքի միւս երկրներում գործ է ածւում պարսկական ցեղի մարդկանց համար, — մեծ մասամբ քուրդ են։ 400000 աղանդաւորներից¹⁾ 15000-ը միայն պատկանում են թուրքմէն ցեղին և երկու երեք ցեղ էլ իրենց արաք են անուանում։ Կարմիր-գրլուխները, որոնց գլխաւոր հասարակութիւնները բնակւում են միջին Եփրատի աւազանում՝ Գերմիլիի ափերում և վերին Կղզլ —

1) Տայլորը նրանց հաշւում է 250000-ից ոչ աւելի։

իրմաքի հովտում, մուսուլմաններից համարւում են իրբեւ քրիստոնէական աղանդ, որովհետև նրանք խմում են գինի, չեն քօղարկում իրենց կանանց, կատարում են մկրտութեան և հաղորդութեան ծէսերը¹⁾: Բոլոր աղանդաւորներից աւելի կըզըլ—բաշերն են բացարձակապէս դատապարտուած իրենց զրացիներից— իրաւամք թէ անիրաւացի, այդ յայտնի չէ—իրբեւ գիշերային տօնախմբութիւններ կատարուներ, ուր տիրում է ամենակատարեալ խառնակութիւն սեռերի, որից և առնուած է թեռահ Սոնդերան «Լոյս Մարտզներ» անունը, որով կցւում են նրանք ընդհանիրապէս²⁾: Կըզըլ—բաշերի կրօնական պետք նստում է Դէրսիմում, Մուրագ գետի (Որածանու) մօտ³⁾:

Միւս սաստիկ ատուած աղանդաւորները նրանք են, որոնք իրենց հարեաններից անուանւում են «Սատանայ պաշտողներ»: Եղիղի կամ Շեմսիէ քրդերը, թէև շատ սակաւաթիւ՝ հազիւ յիսուն հազար տու առաւելն, ցրուած են ահագին տարածութեան վրայ: Նրանք բնակւում են գլխաւորապէս Սինջար լեռներում՝ Միջագետքի գաշտերից հիւսիս, բայց կան նրանցից նաև զանի և կրդումի բարձրաւանդակների վրայ, այլ և Պարսկաստանում և Անդրկովկասում՝ Սեանի արևելեան ափի մօտ⁴⁾: Սրանց մի գալութը հասել է մինչ իսկ Վոսփորին, կոստանդնուպոլսի գիւմաց⁵⁾ (12):

Ատուած, անարգուած ամեն ցեղի և ամեն կրօնի զրացիներից, երբեմն ստիպուած կռուել պաշտամուելու համար, երբեմն ստիպուած խուսափել իրենց հալածողներից, սպառուելով սովից և հիւսնդութիւններից աւելի քան թէ սրիյ, այսուամենայնիւ յաջողել են նրանք գարերի ընթացքում պահպանել իրենց աղքատ

1) Taylor, Journal of the Geographical Society, 1868.

2) Peter Lerch, Հիշուած;—A. Vambery, Allgemeine Zeitung, 27 դեկ. 1877;—Millingen, Wild Life among the Koords.

3) Ernest Chantre, Tableau des tribus Kurdes.

4) Moritz Wagner, Reise nach Persien und dem Lande der Kurden.

5) Von Hammer—Purgstall;—Carl Ritter, Asien.

Հասարակութիւնները առանց ունենալու հրէաների նման հաստատուն նեցուկ, որ մատակարարում է գրաւոր աւանդութեանց գիրքը և անցեալ երկարատև անկախութեան պատմութիւնը։ Նրանք ունին միայն իրենց հաւատը և երեկեան կորիւների յիշատակը վաղորդեան կուռի խրախուսուելու համար։ Նրանք անդում են, որ իրենց մեծ սուրբը, Աղի Շէյխը գրեց վարդապետութեան մի գիրք՝ «Ասուատ» կամ «Ուե» անունով, բայց ոչ մի ապացոյց չկաց գրան հաստատող և այդ հնարուած է հաւանականաբար մուսուլմաններին ստիպելու որ իրենցից ակնածեն¹⁾)։ Ոչ մի տեղում չեն պահել նրանք իրենց անկախութիւնը։ Սինջարի եղիդները, որ քրդեր են արաբների հետ խառնուած և սերունդից սերունդ ապրում էին ինքնավար հասարակապետութեամբ իրենց ժայռերի ամրոցներում, մեծ մասամբ ջնջուեցան 1838-ին։ Ծուխ տուին քարայրերին, ուր նրանց մեծ մասը ապաստանած էր, կանանց ծախեցին իրքես սորուկ և ցեղի թշուառ մնացորդները ստիպուեցան տէր ճանաչել մուսուլմաններին։

Եղիդների սփառուած գաւառները այցելող ճանապարհորդների պատմածները իրաք հետ համեմատելիս նկատում է այնպիսի տարածայնութիւն, որ հարկ եղաւ սատանայ պաշտող աղանդաւորներին համարել զանազան ծագումից սերուած։ Հայերի հարեւանութեամբ նրանք թւում են միւնոյն ցեղաբանական բնից ծագած և ճշգրիտ գրաւոր հաւասարիներ յիշատակում են իններորդ գարի կէսը և մի գիւղ վանի գաւառում, իրեւ ժամանակ և տեղի, ուր ծնունդ առաւ այդ կրօնը, առաջ պարզապէս իրքեւ մի հերձուած հայկական գաւանութեան։ Սինջարում, ընդհակառակին, եղիդներին տալիս են արաբական ծագումն և նրանց կրօնը համարում են խալամից ծնած։ Պարտկաստանում համարում են նրանք Վէրքերի սերունդ, թէև նրանց տրուած անունն իսկ կապում է նրանց մուսուլման աշխարհի հետ, քանի որ Եղիդը այն առուած խալիքն է, Զիւսէյնի մահուան պատճառը, Մարգարէի թուը, որի անունով կոչում են եղիդները(13)։ Վերջապէս՝ քուրդ

1) Frederick Forbes, Journal of the Geographical Society, 1839

ցեղերը չեն զանազանում դրանց ստորին գաշտագետիններում՝ ապրող քրիստոնեայ աղանդաւորներից և պատմում են թէ մէկերի և թէ միւսների մասին շատ անհեթեթ պատմութիւններ։ Զիայ գարշութիւն, որ նրանց ցլերագրեն, չկայ ցնորաբանութիւն, որ չերեակայեն նրանց մասին։ Նրանց ծիսակատարութիւները տարբերում են նայելով երկրին կան որ մլրտում են մանուկներին և հանում են խաչի նշանը¹⁾, մի քանի գաւառներում թրիտում են, մինչդեռ ուրիշ տեղ այդ արգելուած է։ Հայաստանում ապրող եղիդները խստութեամբ պահում են պասերը, մինչդեռ ուրիշ տեղի Դիւտապաշտները աղատ են համարում իրենց ամեն ժամանակ ուտելու։ Մի տեղ տիրում է բազմակնութիւնը, ուրիշ տեղ խիստ միակնութիւնը։ Երբեմն մեծ մասը հագնում էին կապոյտ, այժմ՝ այդ գոյնը գարշելի է նրանց և նուիրուած են սպիտակ գոյնին։ Այս էլ կայ, որ այս հալածուած աղանդաւորները ստիպուած են պարսկական հերձուածի հերետիկոսների նման կեղծել և արտաքուստ կատարել սպաշտանական գաւանութեան ծէսերը, այնուհետ որ չկայ մի քրիստոնէական կամ մուսուլմանական սուրբ, կուղէ շիա, կուղէ սիւննի, որ նրանք ցնդունեն իրեւ իրենց սուրբը և չպաշտեն արտաքին ջերմեռանդութեամբ։

Տարբեր ծագման և զանազան գաւանութեան եղիդների մէջ միացման կապն է Մէլլ+ Թառ-Ռի Սիրամարգ կամ Փիւնիկ թագաւորի՝ պաշտամունքը (14)։ Նա է Տէր կենաց, Առւրբ Հոգի, Հուր և Լոյս։ Նրան եղիդները ներկայացնում են մի թռչնի կերպարանքով, աքաղաղի գլխով, բազմած ճրագտիլի (աշտանակի) վրայ։ Խւր առաջին պաշտօնեան է Արտւսեակը — անկեալ հրեշտակը — Վուսարերը, որին յարգելուց չեն գագարում եղեղիները, չնայելով նրա անկմանը։ Մենք էլ ընկած լինելով, ասում են նրանք, ի՞նչ իրաւունքով անիծենք ընկած հրեշտակին, և որովհետեւ իրենք էլ իրենց սեպհական վրկութիւնը սպասում են աստուածային շնորհից, ինչու համար Մէծ կայծակնահարն էլ չպիտի նորից իւր աստիճանին բարձրանաց իրբեւ Պետ երկնային Զօրքերի։ Յերես նոյն

1) Azahel Grant, The Nestorians.

իսկ Մովսէս Մարգարէն, Մահմէտը, Ցիսուս — Քրիստոսը նրա
մարմնառութիւններն էին, թերեւս նա արգէն նորից բարձրացել
է երկինքը վերստին կատարելու իւր բարձրագոյն պաշտօնէու-
թիւնը, օրէնստու Աստուծոյ հրամանները: Եղիդիներին սարսափէ
տիրում, երբ որ մռւսուլմաններից կամ քրիստոնեաներից լուս
են անկեալ Հրեշտակապետի անունը հայհոյուած, և ասում են
որ նրանց մօտ մահուան պատիժէ նշանակուած այն մարգու
համար, ով գործ կածէ «սատանայ» սառը: Այդ լուղները պար-
տական են սպանել հայհոյովին և յետոյ անձնասպանութիւն գոր-
ծել¹⁾: Խոյս են տալիս նրանք մինչեւ անգամ այն վանկերի զու-
գաւորութիւնից, որ կարող է հայհոյութեան բառն լիշեցնել:
Զերմեռանդութեամբ կատարում են իրենց քահանաների հրաման-
ները և շատերը ուխտ են գնում Շեյխ Աղիի սրբավայրը, որ
գտնուում է Մուսուլի հիւսիսում, Ամադիայի ճանապարհի վրայ:
Նրանց Պատը կամ Շեյխի խանը նստում է բազղի բերդում, որ
գտնուում է մի սեսլացած քարաժայռի վրայ, բայց սրբարանը
գտնուում է մի ուրիշ գիւղում՝ Վալէշ անունով, ուր ասլրած է
եղել մի մարգարէ՝ եղիդիների «Մահմէդը»: Այսուեղ են կատար-
ում մեծ հանդէսները, այսուեղ են գուրս հանուում Մէլէք Թա-
ռոզի սուրբ պատկերը հաւատացեալների երկրագութեան համար:
Առաւօտեան, երբ արեւ ծագում է հորիզոնից, ուխտաւորների
ամբոխը ողջունում է լոյսը երիցո երկրագութեամբ²⁾: Բոլոր ճա-
նապարհորդները, մինչեւ իսկ կաթողիկէ և բողոքական քարոզիները,
որոնք ընդունուած են եղել եղիդիների մօտ և որոնք բնականաբար
սէտք է սարսափէին մօտածելով, որ գտնուում են սատանայ պաշ-
տաղների ներկայութեանը, միաբան վկայում են որ եղիդիները
բարոյապէս շատ գերազանց են իրենց բոլոր հարեւաններից, նես-
տորականներից, լուսաւորչականներից, սիւնիներից և շիաներից:
Նրանք վերին աստիճանի ազնուամիտ են, աւերող և աւարող՝ երբ

1) Taylor, Journal of the Geographical Society, 1868.

2. Niebur; — Garzoni; — Rich; — Ainsworth; — Rousseau; — Forbes; — Perkins; — Wagner.

պատերազմ է հրատարակուած, իսկ խաղաղ ժամանակ ծոյցայելց ակնածալ ամեն բանից, ինչ որ ուրիշինն է։ Անսահման հիւրասիրութիւն են ցոյց տողիս օտարականին, բարեաց սկամ են միմեանց վերաբերութեամբ, քաղցրաբարոց և հաւատարիմ՝ ամսւանութեան մէջ, շատ ջանասէր աշխատութեան մէջ։ Երեկոյեան հանգոտի ժամանակ կամ հողը մշակելիս նրանց երգած բանաստեղծութիւնները երբեմն դիւցազներգութեան կտորներ են, որոյ իրենց նախնեաց մեծագործութիւններն են գովասանում, երբեմն սիրոց երգեր, լի զգացմունքով, երբեմն էլ՝ տրտունջ ու մրմունջ. «Բորենին միայն դիակներն է հանում գերեզմանից, ակնածում է կեանքից, իսկ փաշան երիտասարդների արիւնն է խմում։ Դա անջտում է փեսացուն հարոնացուից։ Անիծեալ ինի ով սիրոց սրաերն է բաժանում։ Անիչուի հզօրը, որ գութ չունի։ Գերեզմանը յետ չէ տալիս մեռածներին, բոյց գերազոյն շրեշտակը կլոէ մեր աղաղակը»։

Քուրդիստանի բնակիչների մէջ կան նաև քրիստոնեայ տղանդաւորներ։ Գլխաւորը զրանցից Նեսոսորական կոչուածներն են, թէեւ այդ կոչումը չեն ընդունում նրանք և իրենք իրենց անուանում են «Մեսոփական Նազուրեցի», «Ասորիքի Նազուրեցի» կամ պարզապէս՝ Նազուրեցի և նրանց լեզուն խակապէս արամական մի բարբառ է, որ ծագում է հին ասորերէնից (սիրիաք)։ Քարոզիչները մտած եցին երրայական լեզուն աւանդել իրենց աշակերտաներին, որոնք զարմանալի դիւրութեամբ կարելի է ասել թէ առանց սովորելու, հասկանում են այդ լեզուն¹)։ Աւելի բազմաթիւ են քան թէ եղիղիները, — թէերես երկու հարիւր հազար²։ և եղիղիների նման սփառած են ընդարձակ տարածութեան վրայ։ Հաւանականաբար որանց աղանդին են պատկանում Զինաստանի նեսոսորականները, որոնց այժմս միայն յիշատակն է մնացել, նաև Մալաբարի ծովափի Նասրանի — Մոսլահները, որոնք ասորերէնն են գործ ածում իրեւ որբազան լեզու և իրենց պետ են ճա-

1) Ernest Renan, Association scientifique de France, 1878.

2) Millingen, Wild Life Amongst the Koords.

նաջում՝ բարիլոնի պատրիարքին, որ նստում է Մուտուլում։ Յայտնի չէ թէ ո՞ր ժամանող և ինչ պատճառով Պարսկաստանի և թուրքական Քուրդիստանի նեստորականները թողին իրենց ասորական հայրենիքը՝ գնալու և հաստատուելու համար այլասեր, այլալեզու և այլակրօն ժողովուրդների մէջ։ Այս անցը անկասկած առաջ է հինգեթիյ։ Երբ որ մուսուլմանները տիրեցին Միջագետքին՝ իրենց նեղութիւն չտուին յարձակուելու վան և Աւրմիա լճերի միջև գտնուած ջուլամերկ լեւանյին գտւառի լրոյ, ուր նեստորականներն ունեին ամբողյներ և բազմամարդ հասարակութիւն։ Այս իրապէս անկախ քրիստոնեաններն իրենց գրութիւնն համարում էին անփառնգ, սակայն 1843 ին շրջակայի մուսուլման քրդերը, խրախուսուած թուրքական կառավարութիւնից, թափուեցին նեստորական գիւղերի վրայ, պաշտամուող այր մարդկանց որի անցկացրին, կանանց գերեցին, մանուկներին թվաստեցին և բռնութեամբ զարձրին մահմէտական, ապագայ թշնամի՝ իրենց սեպհական ընտանիքին։ Այժմն թուրքիան չունի ջուլամերկի քրիստոնեաններից աւելի հնագանգ ժողովուրդ։ Շրջակայ քրդերի նման նրանք ել բաժանեւում են երկու գասակարգի՝ աղնուական կամառներէալ (աշիրէթ) և շինական, որ շատ սակաւ է տարբերւում սորկիյ։ Քահանանների մի ամբողջ նուիրապետութիւն կառավարում է Նրանց՝ Մար-Շիմուն կամ «Տէր Աիմոն» կոչուած քահանայ—թագաւորի պատրիարքութեան ներքոյ։ Պատրիարքութեան յաջորդութեան կարգը անցնում է քեռոց քուերորդուն։ Ասրագայ պատրիարքի մայրը, երբ արդէն յղի է՝ պարտական է բանջարակերութեամբ բաւականանալ ինչպէս որ ապրում է նաև բոլոր բարձր հոգեորականութիւնը։ Աթէ յղացածի յոյսը զուր դուրս գայ և աղջիկ ծնի, այդ աղջիկը գատապարտում է կուտակրօնութեան ցմահ¹⁾։

Նեստորականները շատ չեն հետաքրքրւում այն աստուածաբանական նրբութիւններով Յիսուս—Քրիստոսի մարդկային և աս-

1) Eugène Boré, Mémoires d'un voyageur en Orient;—Müningen, արդէն յիշուած։

տուածային բնութեան վերաբերութեամբ, որի հետեանքն եղաւ Նեստորի հերձուածը: Բայց ծիսակատարութեանց տարբերութիւնը բաւական եղաւ ստեղծելու գարաւոր ատելութիւն նրանց և ուրիշ քրիստոնէական աղանդների միջև: Քաղղէացիք, այն է՝ Միջադետքի և Զագրոսի քրիստոնեաները, որ ապրում են մեծ մասամբ սասրին երկրներում, Դիարբէքիրի շուրջը և Բաղդազիյ հիւսիս, տամնլութեցերորդ գարից Հայքանոնած են, գոնէ պաշտօնապէս, հուովմէական կաթոլիկութեան հետ: Աակայն պահպանել են իրենց նախկին գաւառնութեան զանազան արարողութիւնները և քահանաները ամուսնացած են, բացառութեամբ բարձր հոգեորականութեան: Բայց կան կաթոլիկ քարոզիչներ, որ աշխատում են քաղցէական արարողութիւնը հետզետէ մօտեցնել Արևմտեան եկեղեցու արարոշութեան: Խալ այն նեստորականները, որոնք հաւատարիմ են մնացել Ասորիքի նազարէական դտւանութեանը, գլխաւորապէս 1831 թուից սկսած, գոնեւում են ամերիկական քարոզիչների աղկեցութեան տակ: Այս քարոզիչները մօտ վաթուուն հաստատութիւն ունին այդ երկրներում, օժանդակում են տեղական քահանաներին ռոճկով և ուսումնարանների պահպանութեանը նպաստում: շատ անգամ էլ աղջու կերպով պաշտպանում են լեռնական քրիստոնեաններին թուրքերից և քրդերից:

(Կը շարունակուի):